**ՔԱՂՎԱԾՔ**

**ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ՝ ԿԱՅԱՑԱԾ 29.11.2018թ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ**

Նիստը վարում էր համայնքի ղեկավար, ավագանու անդամ Մամիկոն Ասլանյանը:

Մասնակցում էին՝

**Հայաստանի Հանրապետական կուսակցության** ավագանու խմբակցության անդամներ՝

*Արտյոմ Գրիգորյանը, Արմեն Մարինյանը, Վահագն Ավագյանը, Հայկազ Մովսիսյանը, Դավիթ Սիմոնյանը, Սոխակ Մելքոնյանը, Գայանե Քալանթարյանը, Խորեն Վարդանյանը, Սեյրան Ղամբարյանը, Արման Ափինյանը:*

**Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության** ավագանու խմբակցության անդամ՝

*Արևիկ Լոքյանը, Սեյրան Աղաբեկյանը:*

**«Հայկական Վերածնունդ» կուսակցության** ավագանու խմբակցության անդամներ՝

*Արկադի Փելեշյանը, Կարեն Դավթյանը:*

**«Լուսավոր Հայաստան» կուսակցության** ավագանու խմբակցության անդամներ՝ *Հրանտ Այվազյանը, Արմեն Եղիազարյանը:*

**«Բարգավաճ Հայաստան» կուսակցության** ավագանու անդամներ՝ *Հրաչիկ Ղամբարյանը, Մարիամ Ափերյանը, Դավիթ Հակոբյանը:*

Նիստից բացակայում էին՝

Հայաստանի Հանրապետական կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ *Մարինե Հովհաննիսյանը, Վահե Դոխոյանը:*

«Հայկական Վերածնունդ» կուսակցության ավագանու անդամներ՝

*Համիկ Խլուպուզյանը, Էրիկ Մովսիսյանը, Տիգրան Նազարյանը:*

«Լուսավոր Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝

*Քրիստ Մարուքյանը, Կարինե Ղուկասյանը, Հայկազ Սիմիկյանը, Վահե Կոռյանը, Անահիտ Կարապետյանը, Ռոմիկ Մարգարյանը, Կարեն Բեկչյանը, Սուրեն Կարապետյանը:*

Նիստին մասնակցում էին նաև համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար *Արթուր Օհանյանը*, համայնքապետարանի ստորաբաժանումների ղեկավարներ, հասարակական կազմակերպությունների և ԶԼՄ-ների ներկայացուցիչներ:

Նիստը վարող *Մամիկոն Ասլանյանը* ժամը 11.27-ին նիստը հայտարարեց բացված:

(Վանաձորի ավագանու 2018 թվականի 5-րդ նստաշրջանի 29.11.2018 թ. ավագանու հերթական նիստի տեսաձայնագրությունն ամբողջովին առկա է (https://www.youtube.com/channel/UCgLPKa0T1z-DfFpgTbTmD1Q հղումով):

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ հաստատել օրակարգն ամբողջությամբ:

Օրակարգի հաստատման վերաբերյալ առաջարկությամբ հանդես եկավ Լուսավոր Հայաստան կուսակցության ավագանու խմբակցության ղեկավար Արմեն Եղիազարյանը, առաջարկելով համայնքի բյուջեի նախագծի քննարկումը հետաձգել 10 օրով և այն տեղափոխել նշված ժամկետում հրավիրվելիք ավագանու արտահերթ նիստ:

Նիստը վարողը պարզաբանեց, որ գնումների գործընթացը և բյուջեի ծախսային մասն ըստ պլանավորված ժամանակացույցի իրականացնելու նպատակով ճիշտ է այս ավագանու նիստում հաստատել բյուջեի նախագիծը, իսկ եթե կլինեն առաջարկություններ փոփոխությունների վերաբերյալ, ապա դրանց կարելի է անդրադառնալ հետագայում:

**Կողմ՝ 18, դեմ՝ 2 /Հ.Այվազյան, Ա.Եղիազարյան/, քվեարկությամբ հաստատվեց օրակարգը, ինչը նաև օրակարգի առաջին հարցի սպառումն էր**:

Հաստատվեց օրակարգը՝

1. Վանաձոր համայնքի 2019թ. բյուջեն հաստատելու մասին

զեկ.՝ Վ.Գրիգորյան

2. Վանաձոր համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

զեկ.՝ Վ.Գրիգորյան

3. Եվգենի Սերգեյի Կապուստինին «Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին

զեկ.՝ Մ.Ասլանյան

4.Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

զեկ.՝ Մ.Ասլանյան

1. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի 2019թ. բյուջեն հաստատելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը:

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 15, դեմ՝ 5 /Հ.Այվազյան, Ա.Եղիազարյան, Մ.Ապերյան, Հ.Ղամբարյան, Դ.Հակոբյան/, ընդունվեց որոշում:**

2. **ԼՍԵՑԻՆ** - Վանաձոր համայնքի ավագանու 2017թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 109-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

- Զեկուցեց համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնի պետ Վահե Գրիգորյանը

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

**Քվեարկությամբ, կողմ՝ 18, ձեռնպահ՝ 2 /Հ.Այվազյան, Ա.Եղիազարյան/, ընդունվեց որոշում:**

3. **ԼՍԵՑԻՆ -** . Եվգենի Սերգեյի Կապուստինին «Վանաձորի պատվավոր քաղաքացի» կոչում շնորհելու մասին

- Զեկուցեց համայնքի ղեկավար, նիստը վարող Մամիկոն Ասլանյանը

Զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

**Քվեարկությամբ, կողմ՝ 19 /Հ.Այվազյանը չմասնակցեց քվեարկությանը/, ընդունվեց որոշում:**

4. **ԼՍԵՑԻՆ -** . Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին

Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Վանաձոր համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2018 թվականի դեկտեմբերի 21-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

**Քվեարկությամբ, կողմ՝ 18 /Ա.Փելեշյանը և Հ.Այվազյանը չմասնակցեցին քվեարկությանը/, ընդունվեց որոշում:**

Վանաձորի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2018 թվականի դեկտեմբերի 21-ը:

ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ԱՐԹՈՒՐ ՕՀԱՆՅԱՆԸ

Արձանագրությունը կազմեց Է. Հովսեփյանը